# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# ՀՐԱՄԱՆ

« 27 » սեպտեմբեր 2024թ. N 197 -Ա

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և նույն հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 05-ի թիվ 151-Լ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության 11.1 կետի 5-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ու «ԳՈՌ-ՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 01 մարտի 2024 թվականին կնքված պետության կարիքների համար « ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱԴ-24/1-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի 8.11 կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 2024 թվականի կարիքների համար «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱԴ-24/1» ծածկագրով (արխիվի դարակաշարերի) ընթացակարգի հաղթող մասնակից «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած և պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու հիմքով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Հաստատել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող տեղեկությունները՝ համաձայն կից հավելվածի:
3. Սույն հրամանը սահմանված ժամկետում ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն և մասնակցին:

Недействительная подпись

X

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Подписано: MARGARYAN KAREN 2410820077

**Կ. Մարգարյան**

**Հավելված 1**
ՀՀ ՔԿ գլխավոր քարտուղարի
«_27_» սեպտեմբերի 2024թ.
թիվ_197-Կ_հրամանի

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ | 08430516 | ք. Գավառ, Գ. Միքայելյան 69 | - | «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ն 03.09.2024թ.-ին ՀՀ քննչական կոմիտեին ներկայացված գրությամբ հրաժարվում է մատակարարել թիվ ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱԴ-24/1-1 պայմանագրով նախատեսված ապրանքների չմատակարարված մասը: | - | 27.09.2024թ.<br>ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱԴ-24/1-1 |